ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 46

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ

ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

07-ը հուլիսի 2020թ.

Առցանց կազմակերպված նիստին մասնակցել է գիտական խորհրդի 35 անդամներից 26-ը:

Նիստն անց է կացվել zoom.us հարթակում, իսկ քվեարկությունը Google հարթակում, գիտական խորհրդի նախագահն էր Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարը՝ Մ. Ս. Աթոյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մակարյանը:

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հաղորդում ԵՊՀ ԻՄ 2019-2020 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյան** /
2. Հաղորդում ինքնավերլուծության գործընթացի մասին: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյան**/
3. ԵՊՀ ԻՄ 2021-թ.-ի ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա.Մակարյան** /
4. Հաղորդում ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ 2019-2020 ուստարվա գործունեության մասին: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյան** /
5. Հաղորդում ԵՊՀ ԻՄ հաշվապահության 2019-2020 ուստարվա գործունեության մասին: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահ **Մ. Մխիթարյան** /
6. Հաղորդում ԵՊՀ ԻՄ ՏՀՍԶԲ 2019-2020 ուստարվա գործունեության մասին: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՏՀՍԶԲ վարիչ **Տ. Խաչատրյան** /

**7.** Հաղորդում ԵՊՀ ԻՄ ԱԿԲ 2019-2020 ուստարվա գործունեության մասին։ /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ԱԿԲ վարիչ **Ա. Եգանյան /**

8. Ընթացիկ հարցեր։

8.1. ԵՊՀ ԻՄ-ի Տավուշ հետազոտական կենտրոնի հետազոտական ուղղությունների քննարկում։ /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա.Մակարյան /**

8.2. ԵՊՀ ԻՄ-ի 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի ուսման վարձերի չափերի հաստատումն ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) և կրեդիտների։ /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյան /**

8.3. Գ. Սիմոնյանի և Ա. Մարգարյանի Ձայնի մոնիտորինգ ուսումնամեթոդական աշխատանքը երաշխավորելու մասին։ /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար **Մ. Աթոյան/**

8.4. ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ փոխնախագահի պաշտոնում Ինգա Ասլանյանին հաստատելու մասին։

8.5. ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ քարտուղարի պաշտոնում Անուշ Խաչատրյանին հաստատելու մասին։

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 46/1

- Հաստատել նիստի օրակարգը։

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի քվեարկության արդյունքներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումներով՝ հղում 1, հղում 2։

***<u>Օրակարգի առաջին</u>*** **՝** « Հաղորդում ԵՊՀ ԻՄ 2019-2020 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին» հարցի վերաբերյալ **ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանի** զեկույցը ներկայացվում է ստորև.

«2019-2020 ուստարվա առկա և հեռակա ուսուցմամբ ամփոփիչ ատեստավորումը մասնաճյուղում իրականացվել է համաձայն հաստատված գրաֆիկի՝ սույն թվականի մայիսի 16-ից մինչև հունիսի 30-ը: 2019-2020 ուստարում առկա և հեռակա ուսուցմամբ մասնաճյուղն ունեցել է ընդհանուր **348 շրջանավարտ**, այդ թվում առկա ուսուցմամբ՝ 166 շրջանավարտ (40 անվճար, 126 վճարովի, որից 1 ուսանող նախորդ տարիներից) և հեռակա ուսուցմամբ՝ 182 շրջանավարտ (3 ուսանող չի անցել ամփոփիչ ատեստավորում): Այս ուսումնական տարում մասնաճյուղն ունեցել է նաև Մանկավարժի լրացուցիչ որակավորման 32 շրջանավարտ:

Ֆակուլտետների ներկայացմամբ առկա ուսուցման համակարգում, համեմատական կարգով, մեծ թվով շրջանավարտներ ունեցել է Հումանիտար գիտությունների ֆակուլտետը, իսկ փոքր թվով՝ Կիրառական արվեստի ֆակուլտետը: Ըստ կրթական ծրագրերի, ավելի շատ շրջանավարտներ ունեցել են *Տարրական մանկավարժություն և մեթոդիկա*, *Տնտեսագիտություն*, *Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա* կրթական ծրագրերում, իսկ նախորդ ուստարվա շրջանավարտների թվի համեմատությամբ՝ *Անգլերեն լեզու և գրականություն, Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա, Տնտեսագիտություն* մասնագիտություններով:

Հեռակա ուսուցման համակարգում ևս մեծ թվով շրջանավարտներ ունեցել է հումանիտար ուղղությամբ մասնագիտությունները, թեև շրջանավարտների թիվը նվազել է նախորդ տարվա ցուցանիշի համեմատությամբ: Հեռակա ուսուցման համակարգում ունեցել ենք նույնքան մասնագիտություններ, որքան նախորդ տարի (7) և բոլոր մասնագիտություններում շրջանավարտների թիվը նվազել է նախորդ տարվա ցուցանիշի համեմատ: Վերջին երեք տարվա տվյալներով ամենաշատ շրջանավարտներ ունեցել ենք *Տնտեսագիտության տեսություն* և *Պատմություն* մասնագիտություններում:

Ամփոփիչ ատեստավորման միջին գնահատականով առկա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշը գրանցել է *Ֆրանսերեն լեզու և գրականություն* կրթական ծրագիրը, իսկ ամենացածրը՝ *Տնտեսագիտությունը*: Նախորդ ուստարվա համեմատ ցուցանիշները բարձրացել են *Ֆրանսերեն լեզու և գրականություն*, *Հայոց լեզու և գրականություն*, *Սերվիս* կրթական ծրագրերում:

Առկա ուսուցման համակարգում ամփոփիչ ատեստավորման միջին գնահատականը լավ և գերազանց է, իսկ հեռակայում՝ հիմնականում բավարար:

Հեռակա ուսուցման համակարգում ամփոփիչ ատեստավորման միջին գնահատականով բարձր ցուցանիշ գրանցել են *Հոգեբանություն, Սերվիս, Քարտեզ. և կադաստրային գործ, Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա, Բնապահպանություն և բնօգտագործում* մասնագիտությունները, իսկ ցածր ցուցանիշ՝ *Պատմություն և Տնտեսագիտ. տեսություն* մասնագիտությունները՝ պայմանավորված շրջանավարտների կարողություններով:

Ամփոփիչ ատեստավորման գործընթացում բողոքարկումներ չեն եղել:

Գերազանցության դիպլոմ ստացել են ընդամենը 26 շրջանավարտներ: Հեռակա ուսուցման համակարգում նախորդ տարվա համեմատությամբ այս տարի գերազանցության դիպլոմով շրջանավարտ չենք ունեցել:

Առաջին փուլով մագիստրատուրա կրթական աստիճանում ուսումը շարունակելու հայտ են ներկայացրել 12 շրջանավարտներ, որոնցից 3-ը *Տնտեսագիտությունից, 3-ը՝ Անգլերեն լեզու և գրականությունից, 3-ը Տարրական մանկավարժություն և մեթոդիկայից:*

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների կողմից տրված հաշվետվություններում ներկայացվել են նաև կարծիք-առաջարկներ: Կարծիքների ամբողջացմամբ պաշտպանության ներկայացված թեմաները ունեցել են գիտականություն, չափորոշիչներին համապատասխան շարադրանք, արդիականություն: Տարրական մանկավարժություն և մեթոդիկա

կրթական ծրագրի համար առաջարկ է կատարվել ավարտական աշխատանքների թեմաների հաստատման համար ստեղծել նեղ մասնագիտական հանձնախումբ:

Ստորև ներկայացված է հանձնաժողովների նախագահների կողմից կատարված առաջարկությունները.

***Գիտելիքների բարելավման համար՝***

| | |
|---|---|
| Դիզայն | - տեսական գիտելիքներին տրամադրել առավել մեծ ուշադրություն |

***Կարողությունների զարգացման համար՝***

| | |
|---|---|
| Պատմություն | - ուշադրություն դարձնել , որ ավարտական աշխատանքների թեմաներում ընդգրկվեն նաև հին շրջանից և միջնադարից |
| Հայոց լեզու և գրակ. | - ուշադրություն դարձնել, որպեսզի ավարտական աշխատանքներում ընդգրկվեն նաև ծննդով Տավուշի մարզի գրողների ստեղծագործությունները, ժողովրդական բանահյուսությունը |
| Սերվիս | - ուշադրություն դարձնել, որ ավարտական աշխատանքներն ունենան կիրառական նշանակություն |
| Բնապահպ. և բնօգտագործում | - ուշադրություն դարձնել, որ ավարտական աշխատանքները ունենան կիրառական նշանակություն |

***Առաջարկների որոշ մասը վերաբերում է ռեսուրսների բարելավմանը՝***

| | |
|---|---|
| Տարրակ. մանկ. և մեթոդիկա | - համալրել ժամանակակից մասնագիտական և մեթոդական գրականությունը |

*Առաջարկների որոշ մասը վերաբերում է համագործակցությանը՝*

| | |
|---|---|
| ԱՆԳԼ/ՖԼԳ | - կազմակերպել փոխադարձ այցեություններ համապատասխան կրթական ծրագրեր իրականացնող բուհերի հետ |
| Տնտեսագիտ. | - զարգացնել համագործակցությունը պետական տնտեսական քաղաքականություններ իրականացնող կառույցների հետ և լավագույն ավարտական աշխատանքները պաշտպանությունից հետո տրամադրել |
| Ինֆորմատիկա և կիրառ. մաթեմ. | - կազմակերպել շուկայում պահանջարկ ունեցող ավարտական աշխատանքների ներդրմանն ուղղված աշխատանքներ |

ՈՒՄՎ բաժնի կողմից որպես առաջարկ՝ կարծում ենք, որ առաջիկա տարիների համար ավարտական աշխատանքների ղեկավար կարելի է ընտրել նաև պրակտիկ փորձ ունեցող ղեկավարների››:

**Արտահայտվեցին** Ա. Մակարյանը, Դ. Թինոյանը:

Մասնավորապես Ա. Մակարյանը նշեց, որ նախապատրաստում ենք ավարտական աշխատանքների կարգում որոշակի փոփոխություններ, որոնք կքննարկվեն ամբիոններում, ինչպես նաև պատրաստվում ենք բոլոր հանձնաժողովների կարծիքները ուղարկել ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժին ընդհանուր ուսումնասիրության համար, ինչպես նաև ամեն մի ամբիոնի համապատասխան հանձնաժողովի կարծիքները ուղարկվելու են ամբիոն:

Առցանց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվել է.***

***ՈՐՈՇՈՒՄ 46/2***

Ընդունել ի գիտություն:

***<u>Օրակարգի երկրորդ</u>*** ՝ « Հաղորդում ինքնավերլուծության գործընթացի մասին » հարցի հետ կապված ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյանի** հաղորդումը հետևյալն էր.

«ԵՊՀ իջևանի մասնաճյուղի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 1-ին նպատակի 3-րդ խնդրի 5-րդ գործողության իրականացման և բուհերի հավատարմագրման գործընթացների շրջանակներում մասնաճյուղը 2019թ.-ի դեկտեմբերից սկսել էր մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնագնահատման զեկույցի պատրաստման գործընթացը։

Զեկույցի պատրաստման համար 2019թ. դեկտեմբերին մասնաճյուղում ստեղծվել է աշխատանքային խումբ։ Աշխատանքային խումբն ըստ ինքավերլուծության 10 չափանիշների բաժանվել է 10 ենթախմբերի։ Խմբերի գործունեությունը համակարգել է մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը։ Բաժինն ըստ մշակած ժամանակացույցի պարբերաբար կազմակերպել է հանդիպումներ աշխատանքային խմբերի անդամների հետ, տրամադրել համապատասխան խորհրդատվություն և աջակցություն՝ ինքնավերլուծությունը պատշաճ իրականացնելու համար:

ԵՊՀ ԻՄ-ն ունի ինքնավերլուծություն իրականացնելու փորձ. 2011, 2013 և 2015 թվականներին ըստ ձևաչափի պատրաստվել են ինքնավերլուծության զեկույցներ:

Ինստիտուցիոնալ կարողությունների հերթական ինքնավերլուծության իրականացումը նպատակ ունի ներկայացնելու, որ մասնաճյուղի կառավարումը, կրթական և հետազոտական գործունեությունը և հասարակությանը մատուցվող ծառայությունները պարբերաբար բարելավվում են, որ մասնաճյուղն իր ռազմավարությամբ միտված է դառնալու ուսանողակենտրոն միջավայր, մատուցելու որակյալ կրթական ծառայություններ, ստեղծելու պայմաններ շահակիցների ներկա և հեռանկարային պահանջմունքները բավարարելու համար:

Քանի որ ինքնավերլուծության ձևաչափը ենթադրում է ուսումնական հաստատության ծավալած բոլոր ոլորտների գործընթացների վերլուծություն, աշխատանքային խմբերն աշխատել են մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումների հետ: Ըստ իրենց չափանիշների պահանջների հավաքագրել են մասնաճյուղի գործունեության անհրաժեշտ տվյալները, ուսումնասիրել մասնաճյուղի ձեռքբերումները կրթական ծառայությունների մատուցման գործընթացում, ներկայացրել կրթության ոլորտում ներդրված նոր մոտեցումները, վերլուծել այդ գործընթացների և մոտեցումների արդյունավետությունը, բացահայտել դրանց ուժեղ և թույլ կողմերը, նշել բացթողումները և այլն:

Աշխատանքային խմբերն աշխատել են արդյունավետ և 2020թ.-ի մարտին՝ ժամանակացույցին համապատասխան, ՄԿՈԱ բաժին են ներկայացրել ինքնավերլուծության իրենց չափանիշների նախնական զեկույցները, որոնց հիման վրա կազմվել է ընդհանուր զեկույցը:

Հարկ է նշել, որ երկրում առկա արտակարգ իրավիճակն իր անդրադարձն ունեցավ զեկույցի վերջնական տարբերակի խմբագրման աշխատանքների իրականացման ժամկետների վրա:

Նշենք, որ չնայած զեկույցը պատրաստ է, բայց խնդիր ունենք կապված զեկույցի ծավալի հետ: ՄԿՈԱ բաժնում զեկույցը վերախմբագրվում է և մինչև հուլիսի 15-ը այն պատրաստ կլինի ներկայացնելու մասնաճյուղի աշխատակազմին, ուսանողներին և նաև հանրությանը, որից հետո այն կներկայացվի Երևանի պետական համալսարանի որակի կենտրոն»:

**Արտահայտվեց** ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը: Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի ինքնավերլուծությունը և ԵՊՀ-ի ինքնավերլուծությունը նույն ծավալի են, որը տրամաբանական չէ, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ծավալը փոքրքցնել, ինչպես նաև ուշադրություն դարձնել վերլուծությունների վրա, քչացնելով պրոցեսների նկարագրությունները:

Առցանց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվել է.***

**Որոշում 46/3**

Ընդունել ի գիտություն։

***<u>Օրակարգի երրորդ՝</u>*** «ԵՊՀ ԻՄ 2021-թ.-ի ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում» հարցի հետ կապված լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը։

Նա նշեց, որ ամեն տարի ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդում քննարկվում է ընդունելության մասնագիտությունների ցանկը՝ առավել արդյունավետ ընդունելություն կազմակերպելու համար։ Նա նշեց նաև, որ այս պահին տեղի են ունենում ընդունելության քննություններ և կարող ենք ասել, որ ունենք բավականաչափ մեծ քանակի դիմորդներ, համեմատելով տարածաշրջանային այլ բուհերի կամ բուհերի մասնաճյուղների հետ, մենք մեր դիմորդների քանակով գերազանցում ենք։ Օրինակ Գորիսի պետական համալսարանը ունեցել է ընդհամենը 108 դիմորդ, մեր դիմորդների քանակը եղել է 251, Գավառը՝ 92, Ագրարային համալսարանը ունեցել է 257 դիմորդ, Գեղարվեստի պետական ակադեմիան՝ 258, իսկ նրա Դիլիջանի մասնաճյուղում դիմել են 9 հոգի, Տնտեսգիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղը ունեցել է 103 դիմորդ , Պոլիտեխնիկի Գյումրու մասնաճյուղը՝ 95 դիմորդ։ Կարելի է ասել, որ այս թվերը խոսում են տարածաշրջանում Համալսարանի և մեր մասին լավ կարծիքի մասին։ Դիմորդների բաշխումը մասնաճյուղում տեղի է ունեցել հետևյալ կերպ՝ ամենամեծ հոսքը ունեցել ենք Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա մասնագիտությամբ՝ 34 դիմորդ, որից արդեն քննությունը անհաջող են հանձնել 15 հոգի, Ֆինանսներ մասնագիտությամբ ունեցել ենք 41 դիմորդ, որից 11-ը անհաջող են հանձնել քննությունը, Պատմություն մասնագիտությամբ ունեցել ենք 21 դիմորդ, որից 9-ը անբավարար է ստացել քննությունը, ավանդական քիչ դիմորդներ ունեք Բնապահպանություն և բնօգտագործում մասնգիտությամբ ՝ 4 դիմորդ, իսկ անցած տարի հեռակայում ունեցել ենք 0 դիմորդ, ՏՄՄ դիմել են 24 հոգի, ՀԼԳ մասնագիտությամբ ունեցել

ենք 18 դիմոդ, Անգլերեն՝ 24 դիմորդ, ֆրանսերեն՝ 4 դիմորդ, Հոգեբանությունը՝ 19 հոգի, զբոսաշրջությունը՝ 35 հոգի, Դիզայնը և Դեկորատիվ կիրառական արվեստը միասին 21 հոգի։ Ուսումնսիրությունը ցույց է տալիս, որ այլ տարածաշրջաններից ունենում ենք քիչ քանակի դիմորդներ, տարածաշրջանում կա դիմորդների որոշակի քնակություն, որը մասնգիտությունների միջև վերաբաշխվում է, և դրանց թվի մեծացմամբ չի մեծանում։

Արտահայտվեցին՝ Մ. Զաքարյանը, Դ. Թինոյանը, Գ. Սիմոնյանը, Լ. Ֆլջյանը, Մ. Միքայելյանը, Ա. Դավթյանը, Մ. Ճաղարյանը։

Մ. Զաքարյանը նշեց, որ անհրաժեշտ է ունենալ որևէ ինժեներական մասնագիտություն Քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտության փոխարեն, որը կարող է կրկնակի ավելացնել Բնագիտական ֆակուլտետ դիմորդների քանակը, կարելի է դպրոցներում հարցում անել թե քանի հոգի են ինժեներական մասնագիտություններով դիմել այլ բուհեր և ինչ մասնագիտություններով, և ըստ այդմ պատկերացում կազմել, թե ինչ մասնագիտությամբ կարելի է ընդունելություն կազմակերպել, իսկ Բնապահպանություն և բնօգտագործումը մասնագիտությունը չարժէ պահել։

Ա. Մակարյանը առաջարկեց որպեսզի Բնական գիտությունների ֆակուլտետը կատարի համապատասխան ուսումնասիրությունները և ներկայացնի համապատասխան հայտ ըստ կարգի առաջարկվող մասնագիտությամբ կրթական ծրագրի լիցենզավորման համար։

Գ. Սիմոնյանը նշեց, որ Բնապահպանություն և բնօգտագործում մասնագիտությունը ամբողջ ՀՀ պահանջված չէ։

Մ. Միքայելյնաը նշեց, որ կարելի ընդունելություն կազմակերպել Կառավարում մասնագիտությամբ։

Ա. Դավթյանը առաջակեց ուսումնսիրել նաև ՆԶՊ մասնագիտությամբ ընդունելության հիմքերը, մենք ունենք համապատասխան լիցենզիա։

Մ. Ճաղարյանը նշեց, որ Տավուշի մարզում կա կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ուսուցիչների կարիք: Վերջում Ա. Մակարյանը նշեց, որ այս հարցին գիտական խորհրդում կանդրադառնանք նաև սեպտեմբերին և կկայացնենք համապատասխան որոշում:

Առցանց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվել է.***

**Որոշում 46/4**

- Ընդունել ի գիտություն:

Մինչև ստորաբաժանումների հաշվետվություններին անդրադառնալը ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ստորաբաժանումները իրենց հաշվետվությունները պետք է ներկայացնեն ճիշտ ժամանակին, լինեն համապատասխան ռազմավարական ծրագրին, և որոնք չեն համապատասխանում պետք է վերանայվեն:

***Օրակարգի չորրորդ՝*** «Հաղորդում ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ 2019-2020 ուստարվա գործունեության մասին» հարցի հետ կապված լսեցին **ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ ՈՒսումնամեթոդական վարչությունը 2019-2020 ուսումնական տարում իր գործունեությունը իրականացրել է ըստ աշխատանքային պլանի, որը բխում է ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրից և միտված է ռազմավարական ծրագրով նախատեսված համապատասխան նպատակների և խնդիրների իրականացմանը, ինչպես նաև ուսումնական գործընթացները կազմակերպել, վերահսկել է հիմք ընդունելով ԵՊՀ-ի կողմից հաստատված կանոնակարգերը՝ «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ», «Երևանի պետական համալսարանում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ», «Երևանի պետական համալսարանի ուսանողների պրակտիկայի

կազմակերպման և անցկացման կարգ»: Հաշվետու ուստարում «Որակյալ կրթություն» ապահովելու նպատակով սահմանված ժամկետում վարչության կողմից ըստ կրթական ծրագրերի չափորոշիչների ստուգվել են 9 կրթական ծրագրեր, դեռևս ընթացքի մեջ են գտնվում Ֆինանսներ և Դեկորատիվ-կիրառական արվեստ կրթական ծրագրերի ստուգման աշխատանքները: Կազմվել են քննաշրջանի ամենօրյա ժամանակացույցեր:

2019-2020թթ. ուստարվա առաջին կիսամյակում ընթացիկ և եզրափակիչ քննությունները իրականացվել են տեսախցիկներով վերազինված 4 լսարաններում, իսկ երկրորդ կիսամյակում, ելնելով երկրում ստեղծված արտակարգ իրավիճակից (համաճարակ covid-19), և' դասապրոցեսը, և' քննաշրջանը ապրիլի 1-ից իրականացվել և իրականացվում է առցանց zoom ծրագրով: Դասապրոցեսի և քննաշրջանի ամբողջ ընթացքը վերահսկվել և վերահսկվում է վարչության կողմից:

ՈՒՄՎ հաշվետվություն ամբողջությամբ կարող եք տեսնել հավելված 1 –ում:

Արտահայտվեցին՝ Գ. Հովհաննիսյանը, Մ. Միքայելյանը և այլոք:

Մասնավորապես Մ. Միքայելյանը առաջարկեց առկա տվյալները տարանջատել ըստ ամբիոնների և ուղարկել ամբիոնների վարիչներին ուսումնական պրոցեսը հետագայում ավելի արդյունավետ դարձնելու համար:

Առցանց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվել է.***

**Որոշում 46/5**

Ընդունել ի գիտություն:

***<u>Օրակարգի հինգերորդ</u>*** **՝** « Հաղորդում ԵՊՀ ԻՄ հաշվապահության 2019-2020 ուստարվա գործունեության մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահ **Մ. Մխիթարյանի** հաղորդումը: Հաղորդումը կարող եք տեսնել հավելված 2-ում:

**Արտահայտվեցին** Ա. Մակարյանը, Լ. Հարությունյանը, Մ. Միքայելյանը և այլոք։

Մասնավորապես առաջարկ եղավ աշխատել ավելի թափանցիկ, որտեղ պարզ կերևա թե ովքեր և ինչի համար են պարգևատրվել, զեղջվել, կամ ինչու են օգնություն ստացել։

Առցանց քվեարկությամբ, միաձայն՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվել է.***

**Որոշում 46/6**

Ընդունել ի գիտություն։

***<u>Օրակարգի վեցերորդ</u>***՝ « Հաղորդում ԵՊՀ ԻՄ ՏՀՍԶԲ 2019-2020 ուստարվա գործունեության մասին» հարցի հետ կապված ԵՊՀ ԻՄ ՏՀՍԶԲ վարիչ Տ. Խաչատրյանի հաղորդումը կարող եք տեսնել հավելված 3-ում։

Արտահայտվեցին Ռ. Բարխուդարյանը և Ա. Մակարյանը։

Արտահայտվողները կարևորեցին առցանց դասընթացների ճիշտ կազմակերպման և վերահսկողության հանգամանքը։

Առցանց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, ձեռնպահ, **որոշվել է.**

**Որոշում 46/7**

Ընդունել ի գիտություն։

***<u>Օրակարգի յոթերորդ</u>***՝ «Հաղորդում ԵՊՀ ԻՄ ԱԿԲ 2019-2020 ուստարվա գործունեության մասին›› հարցի հետ կապված ԵՊՀ ԻՄ ԱԿԲ վարիչ **Ա. Եգանյանի** հաղորդումը կարող եք տեսնել հավելված 4-ում։

Արտահայտվեցին ՝ Լ. Հարությունյանը և այլոք։

Լ. Հարությունյանը նշեց, որ լավ կլինի ԱԿԲ-ը գործունեությունը նպատակաուղված լինի ավելի շատ այլ բուհերի՝ մասնավորապես հետխորհրդային տարածաշրջանի, հետ համագործակցությանը։

Առցանց քվեարկությամբ՝ 25 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ, **որոշվել է.**

**Որոշում 46/8**

Ընդունել ի գիտություն

***Ընթացիկ հարցեր:***

**Լսեցին՝ 8.1** ԵՊՀ ԻՄ-ի Տավուշ հետազոտական կենտրոնի հետազոտական ուղղությունների քննարկում հարցի վերաբերյալ Ա. Մակարյանի հաղորդումը: Նա նշեց, որ Տավուշ հետազոտական կենտրոնը պետք է զբաղվի տարածաշրջանային հետազոտություններով, որը հանդիսանում է ԵՊՀ ԻՄ-ի առաքելություններից մեկը: Դիմել ենք մարզային կառույցներին հետազոտական ուղղությունների վերաբերյալ առաջարկներ ստանալու համար: Տավուշի մարզպետարանը արձագանքել է և ներկայացրել է առաջարկներ կապված հետազոտական ուղղությունների հետ: Մասնավորապես առաջարկվում է իրականացնել հետազոտական աշխատանքներ գյուղատնտեսության, զբոսաշրջության տեսակների, արոտավայրերի բուսատեսակների փոփոխությունների ուսումնասիրման, հանրային կառավարման ոլորտի, մոնիտորինգային մեխանիզմների մշակամն ուղղությամբ: Մասնաճյուղը ստացել է առաջարկ նաև նաև Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն ՀԿ կողմից՝ 1)Տավուշ մարզի նյութական մշակութային ռեսուրսների զբոսաշրջային գնահատականը, 2)Տավուշի մարզի ջրային ռեսուրսերի զբոսաշրջային օգտագործման հնարավորությունները, 3)Տավուշի մարզի անտառային գեոհամակարգի զբոսսաշրջային գոտիավորում և պլանավորում: Ա. Մակարյանը հավելեց նաև, որ Կենտրոնի հատազոտական ուղղությունները պետք է սահմանի ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը: Նշեց նաև, որ հետազոտական աշխատանքների կատարման համար բուջեով նախատեսված է մեկ տարվա համար, մեկ միլիոն դարամի դրամաշնորհ, պայմանով որ աշխատանքներին պետք է մասնակցեն մասնաճյուղի դասախոսները և ուսանողները: Ա. Մակարյանը նշեց, որ ունենք պայմանավորվածություն Անբերդ հետազոտական կենտրոնի տնօրենի հետ հանդիպելու համար: Անբերդ կենտրոնը ունի ավելի քան վեց տարվա փորձ և

միջազգային բարձր հեղինակություն, կուսումնասիրենք նրանց փորձը և կփորձենք մարզի մաշտաբով իրականացնել։

**Արտահայտվեցին՝** Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Գ. Սիմոնյանը, Գ. Ավետիսյանը, Մ. Աթոյանը և այլոք։

Մ.Միքայելյանը նշեց, որ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնը կարող է կազմել Տավուշի մարզի սոցիալ տնտեսական զարգացման ծրագրեր, բացի այդ կարող է նաև մասնավոր բիզնեսի համար բիզնես ծրագրեր կազմել։ Գ. Հովհաննիսյանը նշեց, որ կարող ենք մրցույթ հայտարարել մարզի բնական և պատմաճարտարապետական հուշարձանների գնահատման համար։ Գ. Սիմոնյանը նշեց, որ մասնաճյուղում կարող ենք մարզպետարանի առաջարկները իրականացնել։ Մ. Աթոյանը առաջարկեց, որպեսզի ամբիոնները առաջարկները ներկայացնեն գրավոր։

Առցանց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ***որոշեցին.***

**Որոշում 46/9**

Ընդունել ի գիտություն։

**Լսեցին՝ 8.2** ԵՊՀ ԻՄ-ի 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի ուսման վարձերի չափերի հաստատումն ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) և կրեդիտների հարցի վերաբերյալ։

Առցանց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ***որոշեցին.***

**Որոշում 46/10**

Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի ուսման վարձերի չափերն ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) և կրեդիտների համաձայն հավելված 5-ի։

**Լսեցին՝ 8.3** Գ. Սիմոնյանի և Ա. Մարգարյանի Ձայնի մոնիտորինգ ուսումնամեթոդական աշխատանքը երաշխավորելու մասին։

Առցանց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ ***որոշեցին.***

**Որոշում 46/11**

Երաշխավորել տպագրության Գ. Սիմոնյանի և Ա. Մարգարյանի «Զայնի մոնիտորինգ» ուսումնամեթոդական աշխատանքը։

**Լսեցին՝ 8.4** ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ փոխնախագահի պաշտոնում Ինգա Ասլանյանին հաստատելու մասին։

Առցանց քվեարկությամբ՝ 19 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ ***որոշեցին.***

**Որոշում 46/12**

Հաստատել ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ փոխնախագահի պաշտոնում Ինգա Ասլանյանին։

**Լսեցին՝ 8.5** ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ քարտուղարի պաշտոնում Անուշ Խաչատրյանին հաստատելու մասին։

Առցանց քվեարկությամբ՝ 19 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ ***որոշեցին.***

**Որոշում 46/13**

Հաստատել ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ քարտուղարի պաշտոնում Անուշ Խաչատրյանին։

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ